ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՐԵՆԻ ՏԱՆ ՈԳԻՆ ՄՈՒՇԵՂ ԻՇԽԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ՝ ՈՐՊԵՍ ԿՅԱՆՔԻ ԲԱՑԱՐՁԱԿ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ*

Նարինե Հովհաննիսյան

Բանալի բառեր՝ հայրենի տուն, կորուստ, ոգի, հիշողություն, կարոտախտ, աներկրորդ արժեք, տեսիլ, հոգևոր միջնաբերդ, տունդարձի ճանապարհ, վերագտնում:

Հայրենի տան ոգու՝ որպես կյանքի բացարձակ գոյության խոհափիլիսոփայության գեղագիտական արտահայտությունը եղավ Մուշեղ Իշխանի «Տուներու երգը» ժողովածուն (1936): Ցեղասպանությամբ և բռնագաղթով հայրենազրկված, տարագրության դատապարտված մնացորդաց սերնդի կյանքի ու երազանքի հակադրամիասնությունից ի հայտ եկած հոգեբանական բոլոր ապրումները՝ թախիծն ու ցավը, տառապանքն ու տվայտանքը, անհաշտությունն ու դիմադարձումը, կարոտն ու վերհուշը, հույսն ու հուսալքությունը, հավատն ու տարակուսանքը, գեղարվեստական խտացման են հասել առաջին գրքում և գրքից գիրք ծավալվել Իշխանի ամբողջ բանարվեստում: Երկու հակադիր բևեռներ՝ կորուստն ու վերագտնումը, դառնում են Մ. Իշխանի հայրենական պոեզիայի հիմնադրույթները. կորուստը՝ որպես իրական սկզբնակետ, և վերագտնումը՝ որպես գաղափարական վերջնակետ:

Կյանքի ու երազի, իրականության և պատրանքի սահմանագծերը Մ. Իշխանի պոեզիայում տարրալուծվում են՝ գեղագիտական-փիլիսոփայական սկզբունք հռչակելով կյանքը՝ երազ և երազը՝ կյանք հայեցողությունը: Այլ կերպ ասած, հայրենի տան պատրանքը Մ. Իշխանի պոեզիայում ոչ թե սոսկ երազ է, երևակայական ցնորք ու տեսլապատկեր, այլև իրագործելու միտված, կառուցողական հստակ գաղափար: Տարագրության մեջ՝ որպես սփյուռքահայության վերջին կայան նշակետ է սահմանվում հայրենի տունը, որ ծննդավայրի, հայրենիքի խորհրդապատկերն է, և որը տեսիլից իրականություն դարձնելու ճանապարհը նաև գոյության կռվան է սփյուռքահայության համար. «Մեր պաշտպանած հոգեկան բերդի պարիսպները,- գրում է բանաստեղծը,- խոշոր ճեղքեր ստացած են: Տրովադայի ձին բերդեն ներս սահած է, մեր մեջ է արդեն: Ժամանակն է ահազանգը լսելու» [1]: Ուծացման և ձուլման սպառնալիքին դիմադարձելու գրական ճանապարհի հատուն հանգրվանում պոետը, հետադարձ հայացքով վերահմաստավորելով պայքարի ուղիները, գրում է. «Հիսուն տարի պայքարեցանք, հուսացինք, հուսադրեցինք, սպասեցինք և տեղ մը չհասանք: Ինչ որ կա և պիտի ըլլա այսուհետև՝ քաշքշուկ է, հոգեվարքի երկարաձգում.... Մենք, որ մեր հայու իսկությունը պահելու գերագույն պատերազմը կը մղենք, մենք, որ իբրև մարդ ապրելու և կյանքեն հաճույք զգալու համար իբրև հայկ ուզենք շնչել, ընդունեցեք, որ իրական ողբերգություններու առջև կը գտնվինք հաճախ: Ողբերգությունը հայ հոր, որ իր զավակի աչքերուն մեջ կնայի և հոն չի գտներ ինքզինք՝ իր հոգիին հայեցի պատկերով» [2]:

Հայրենի տան տեսլապատկերը, ինչպես հայոց լեզուն, Իշխանի պոեզիայում դառնում է հոգևոր միջնաբերդ, հայ ոգու ամրոց, ուր պիտի բնակվի և գոյության մարտահրավերներին դիմակայի տարագիր հայ հոգին: Անտուն և անհայրենիք գոյաբանության

---

* Հոդվածն ընդունվել է 10.09.21:
Հոդվածը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը: 16.09.21:

ներապրումները բանական և զգայուն քնարական հերոսին հասցնում են հոգեբանական երկփեղկվածության: Ներքին և արտաքին աշխարհների, հոգևոր ու առարկայական տիրույթների դրամատիկ բախումից ու անզորությունից ելքը դառնում է պատրանքը կամ տեսիլը՝ որպես վաղվա որոշակի ուրվապատկեր: Պատրանքային իրականությունը դառնում է կյանքի շարժիչ ուժ, փակուղային հոգեվիճակից վերելքային ստեղծանք, վերիրականության հանգրվան: Աշխարհի անհանգրվան ճանապարհներին ձգվող սփյուռքահայության ներքին ձայնի արտահայտությունն է «Հայ մամիկի աղոթքը»՝ Աստծուն ուղղված այսպիսի թախանձանք-հորդորանքով. «Մեզ արժանի ըրե, Տե՜ր, մեր խրճիթին աննշան» [3]:

Մ. Իշխանի պոեզիայում հայրենի տան ոգին բացարձակ գոյություն է՝ զգացական էությամբ, անպարագիծ տարողությամբ, անքննելի առարկայականությամբ: Կորուսյալ հայրենական տան ոգին՝ որպես անկորնչելի հիշողություն, աներկրորդ արժեք, սրբություն սրբոց, ուղեկցել է բանաստեղծին կյանքի տարագիր հանգրվաններում: Պոեզիայի աշխարհում հռչակելով հայրենի տան ոգու իշխանությունը՝ բանաստեղծը նշանակետում դնում է տունդարձի ճանապարհի գաղափարը.

Պապենական տուն ես զատ՝ ինձ բացավ դուռ ամե՜ն տուն:
Եվ ուրիշի ոտքերուն թողած գարշանքն ու փոշին
Ընդունեցին և տվին ինձ ընտանի ջերմություն
Որպես լեղի շերտ մը հաց, կամ վարձված, տրտում կին….

Անցա մինա՛կ, դանդաջուն և ցրվեցի մաս առ մաս
Ամեն անկյուն, ամեն տեղ կյանքիս խորհուրդն ու գանձեր
Եվ արդ ինծի անցյալիս հիշատակն իսկ չմնաց…. (24)
(«Պապենական տուն ես զատ»)

Հայրենի տան գեղագիտական կերպարի և ձգողականության ներքին ուժի հետ մեկտեղ Մ. Իշխանի պոեզիայում առկա է նրա կորուստի ցավն ու ողբերգականությունը: Տունը, առհասարակ, Իշխանի բանաստեղծական աշխարհում ոչ թե իր է, անշունչ կառուցվածք, այլ՝ մարմին ու հոգի ունեցող կենդանի գոյություն: Ցեղասպանության զոհ դարձած «հայ տուներու» հիշողությունը խարանի պես դաջված մնաց նրա տոհմիկ զավակների հոգում: Հոգեկան մորմոքը, անբառ կարոտը, մղձավանջային տեսիլ-հիշողությունները, ծանրանալով անխուսափելի ինքնազատագրման օրինաչափությամբ, փոխակերպվում են պոեզիայի.

Ես դեռ մանուկ՝ տեսա հրդեհն հայ տուներուն,
Երբ գյուղն ամբողջ գնդակներու տակ կը թնդար,
Երբ կը փախչեր խելագար մարդ և անասուն
Մինչև երկինք նետվող բոցեն օձագալար:

Մղձավանջին մեջ հրկիզվող հայ տուներուն
Անկե ի վեր՝ կ'ապրի հոգիս մինչև այսօր
Խլյակներու ծխապատ հեծքն ու ճարճատյուն,
Ճիչն ամբոխին և բոցերու սարսափն հզոր…. (28)
(«Հրդեհը»)

Չկա հայրենի տան մարմինը միայն, բայց կա ոգին, որ, աշխարհեաշխարհ սավառնելով, գգվանքով պարուրվում է իր անտուն և անհայրենիք զավակներին, դառնում աներևույթ ներկայություն և գերագույն հիշողություն, ներքին շարունակական ձգողականություն, որ բանուկ է պահում դեպի հայրենիք տանող հոգևոր և առարկայական ճանապարհը: «Թախծի սև ժամերուս» բանաստեղծության մեջ դարձյալ գերակա է այդ ոգին՝ որպես անժխտելի լինելություն, կյանքի «խինդ ու լույս», «բախտորոշ տեսիլք», «ներքին խրոխտանք», «կյանք ու հավատ».

Թախծի սև ժամերուս,
Երբ մութ ու մեգ է չորս դիս՝
Վաղեմի տուն, իմ սրտիս
Դուն կու տաս միշտ խինդ ու լույս:

Անապատին մեջ այս գորշ,
Ուր կը քալեմ հևիհև՝
Կորուսյալ տուն, իմ առջև
Տեսիլքն ես դուն բախտորոշ…. (30)

Հայրենի տունը Մ. Իշխանի բանարվեստում, ներքին հատկանիշներից, ներգործական հատկությունից բացի, կերպավորվում է նաև արտաքին պատկերով: Բանաստեղծը ոգու աչքերով տեսնում և արտապատկերում է հայրենի տան և՛ ներքին էությունը, և՛ արտաքին ճարտարապետությունը: Մանրապատկերի որոշակիությունը, գույների ներքին տրամադրությունը, հողի ու ծաղկի բուրմունքը, արևային զգվանքն ու ծառախիտ պարտեզի բոլորքն ամբողջացնում են հեռվից դյութող հայրենի տան տեսլապատկերը՝ դարձնում առարկայական ու կենդանի գոյություն.

Նուրբ և սպիտակ տուն մը մեկ հարկով
Կեցած բլուրի վրան
Եվ իր դեմ, հեռո՛ւն՝ դաշտեր, ծառ ու ծով:
Ալիքներու խուլ շառաչին նման՝
Հազիվ կը լսվի ծայնը քաղաքին,
Որուն փեշերեն կ՚ուզե խույս տալ ան,
Բայց որուն կառչած կը մնա կրկին:

Ինչպես լուռ հոգին զգեստիդ ծանոթ՝
Կը տեսնեմ կյա՜նքն իսկ «Մեր տան» որմերուն,
Որ գուրգուրանքով իրար գրկած հոդ՝
Զույգի մը բախտին հազիվ կու տան տուն….
Եվ բաղեղապատ սյուներ երկու դին,
Որոնք երջանի՛կ կը բռնեն միշտ վեր
Մուտքի անձնատուր կամար հովանին:
Մեծ դուռ մը միայն-գունեղ ապակի-
Որ անփութորեն կը մնա կես բաց
Իբրև լույսի ճեղք, փորձություն հույսի՝
Ներսի խռովիչ խորհուրդին դիմաց…. (30-31)

(«Տան մը երազը»)

Բանաստեղծությունից բանաստեղծություն հայրենի տունը պատկերանում է նորովի: Բույրին, գույնին, խայտանքին ու ծայնին ավելանում է կյանքի խավարը ցրող լույսի տեսլապատկերը.

Զմրուխտաշատ որթատունկեր վերևեն
Կը հոսին վար՝ զառիթափի ոտքերուն,
Ուր բարտիներ բարձր ջահեր կ՚օրորեն,
Կը մաղվի լույս սոսիներեն սրսփուն…. (33)

Բանաստեղծության մեջ աստիճանաբար հայրենի տունը սոսկ պատկերային արվեստից վերածվում է իր ներքին կյանքն ապրող առլեցուն գոյության: Դա մի հեքիաթային եզերք է՝ միայնակ ծվարած ձորի տրտում ամայության մեջ, դեղձենիների շուքի ներքո, արտացոլանքը՝ գետակի արծաթախիճ հատակին, որ փեղկերը բացած՝ ըմպում է բուրմունք ու հով: Նկարագրականության բանաստեղծական արվեստը հարստանում է նոր պատկերներով.

Ձորի կորած խաղաղության մեջ միևակ,
Տան քովն ի վեր, պզտիկ մարգի մը վրա,
Կը լիզե վիզն իր հորթուկին կով մ՚անհագ,
Ու լիաթոք կարոտանքով կու տա ձայն:

Կովն ընտանի գորգուրանքով կու տա ձայն
Երկու փոքրիկ մանչուկներու սևաչվի,
Որոնք բոբիկ ու կիսամերկ՝ կը խաղան
Գետակին մեջ, իրար կողքի, ձեռք ձեռքի…. (34)

Մանկության՝ վերհուշի թևով բացվող գունագեղ ու կենսահորդ պատկերի մեջ խուժում է ցեղասպանության հիշողությունը: Դժոխային տեսիլը՝ մահվան, աքսորի ու ավերումի բառ-պատկերներով, ցավատանջ երանգներ է հավելում անցյալի անուշ հեքիաթին.

Իմ տվատանջ, արևախա՜նձ մանկություն,
Ո՞ւր ինկար դուն, աքսորի ո՞ր սև ճամբուն,
Եվ ինչպե՞ս շուտ դարձար մշուշ և ստվեր….
Մո՛ւթ է հոգիս…. ոչի՜նչ, ոչինչ չեմ հիշեր…. (34)
(«Ձորի տնակը»)

Հայրենական տան տեսլապատկերը Մ. Իշխանի պոեզիայում փոփոխակվող երևույթ է: Տեսիլը մերթ երևան է բերում ձորակի տուն, մերթ՝ լերան տուն, մերթ՝ ավերակ տուն ու լքված օջախ: Ներհոգեկան այս տեսլապատկերները, որ առարկայական կշռույթ են ձեռք բերում հիշողության խորքերից բացվող մանրապատկերներով, միշտ որոշակի են՝ որպես պատկեր, գիծ, գույն, ձայն, բույր, շարժում: Սիա հայրենական տան տեսլապատկերներից ևս մեկը՝ «Լերան տունը», որ ենթադրում է ուխտավորի դժվարին վերելք, և որը համահավասարվում է աստվածային տան՝ եկեղեցու կամ վանքի ու ժամի: Դա «լուսեղ տեսիլքի» հարկ է, ուր մարդկային հոգին պիտի սփոփանք գտնի, ազատվի աշխարհային ցավերից, մի խոսքով՝ աղոթատան պես սրբավայր.

Ուխտավորի կարոտով քեզի կուգամ ես այսօր,
Դո՜ւն, ժայռակուռ, հպարտ տուն, թառած լերան կատարին….
Ծանր է վերելքը ճամբուդ իմ ծունկերուս դողդոջուն,
Բութ ու մռայլ աչքերով կույր եմ լուսեղ տեսիլքի,
Բայց կը խայտա կուրծքիս տակ՝ լայն շունչին դեմ սարերուն՝
Արյունն իմ հաղթ պապերուս, արծիվներու դրացի….
Ընդունե՜ զիս, ներե՜ ինձ, տո՛ւր մոռացում և անդորր,
Փակե՜ որմերդ իմ վրա աշխարհին դեմ ու մարդոց,
Եղի՜ր դամբանն անողոք հին օրերուս իմ բոլոր
Եվ գերագույն հարություն՝ եղիր դռնակն ոսկեզօծ…. (44-45)
(«Լերան տունը»)

Սերն առ հայրենի տունը Մ. Իշխանի պոեզիայում բացարձակ ու գերագույն զգացմունք է, բայց որովհետև հայրենական տունն առարկայորեն կորուսյալ աշխարհ է, ցնորք ու տեսիլք, ուստի սերն ու ցավը դառնում են համաժամանակյա և համընդհանուր ապրում. «Եվ հիմա ես գիտեմ՝ որ փուճ է ամեն սեր»,- գրում է բանաստեղծը և վերահաստատում. «Միայն դո՜ւն կյանքիս դեմ կը մնաս գերիվեր, // Ո՛վ տան սեր, մե՛ծ հրայրք ճշմարիտ և անանց» (46): Տան սերը Մ. Իշխանի բանարվեստում, որ համանուն է հայրենիքի սիրուն, բոլորանվեր զգացմունքից զատ, ներքին անբարբառ պաշտամունք է, որ բանաստեղծություններից մեկում ինքնարտահայտվում է խոստովանության ու երդումի պես.

Երջանիկ կամ դժբախտ՝ քուկդ եմ ես լիովին՝
Իբրև միշտ քեզմով լի սիրահար պարմանի,
Թեպետ դու ծո՛ւխ ես լոկ և ցնորք անմարմին,
Զոր անվերջ կ՚երազեմ, կը պաշտեմ ես գաղտնի.... (46)

Ուխտյալ նվիրումի խոստովանությանը հաջորդում է երկխոսություն ենթադրող մենախոսության հարցադրումը՝ էլեգիական թախծի մեղմ հնչերանգներով. «Արդյոք ճի՞շտ է, որ դուն ունեցար օր մը կյանք՝ // Որմերով, օճառով ու երգով իրական» (46), բայց արծագանքի փոխարեն դիմադարձ լռությունն է և անգյուտ որոնումի ներքին տրամադրությունը. «Բայց ավա՛ղ, իմ հոգիս չունի ձայնն հոգիիդ // Եվ աչքերս են դատարկ գիծերուդ տեսիլքեն» (46): Հորիզոնի նման հեռավոր և մերձ հայրենական տունն իր անմատչելիությամբ ավելի ուժգին է դարձնում կարոտյալի տենչանքը, բորբոքում հրայրքով «ճշմարիտ և անանց».

Այս օտար ափերեն- օ՛, թախիծ առհավետ-
Կը մնամ քարիդ մեկ մասունքին իսկ կարոտ,
Անկարող զգվելու մոխիրեդ ափ մը գեթ,-
Քեզ ցրվա՛ծ են իսպառ խորշակներն արյունոտ....

Բայց դարձեր ես արդեն հեքիաթի ապարանք,
Որ ինչքան երևիս անմատույց, հեռացած՝
Քեզ այնքան ճամբուս դեմ կ՚ըզգամ մոտ շարունակ.... (47)

(«Տան սեր»)

«Հսկա շենքին մը դիմաց» բանաստեղծության մեջ բանաստեղծի տարագիր հոգին հայրենի գեղջկական խրճիթը վերարժևորում է որակական նոր հատկանիշով: Դա քարաբուխ ժպիտն է, որին հակադրվում է հյուրընկալ քաղաքի հսկայական շենքի «բիրտ սառնությամբ» նայվածքը.

Քու պարզուկ տան քարերու հյուսքն ավելի
Ուներ ժպիտ, երկար կյանք՝
Քան շեղջակույտը մեծդի սա հսկային, որ քու դիմաց
Բիրտ սառնությամբ, սպառնագին կը ցցվի.... (47)

Հայրենի տան կորուստի հոգևոր ողբերգությունը, որն առկա է «Տուներու երգը» ժողովածուում և այլ շարքերում, առաջ է բերում առհասարակ ավերակ և անկյանք տան հանդեպ բանաստեղծի ցավն ու կարեկցանքը: Տարագրության ափերում ամեն մի լքված ու կիսավեր տուն անմիջապես արթնացնում է ներքին զուգորդություն հեռվում թողլքված, անտեր հայրենի տան հետ.

Դո՛ւն, իմ ավեր տուն, քա՜ղցր անծանոթ,
Այսօր, երբ հոգիս կ՚աղոթե գաղտնի
Օտար տուներու աչյուններուն մոտ՝
Ո՞վ է, որ իմ տեղ կ՚այցելե քեզի.... (54)

(«Ավերակ տունը»)

Բայց կարոտյալ որդու այս և մյուս ցավախառն պոռթկումները մնում են անարձագանք, ու հաջորդում է հոգևոր դիմադարձ խռովքը.

Իմ տո՛ւն, իմ մա՛յր հեռավոր,
Դարձած ես սուտ և անգութ.... (55)

(«Իմ տուն, իմ մայր»)

Հայրենական տան անընդհատական որոնումը բանաստեղծին չի հասցնում ըղձյալ եզերք, որի սիրառատ ներդաշնակության ներքո պիտի հանգստություն գտնի նրա «մոլորահած, անկայան» հոգին, և տառապած հոգին կյանքի ունայնության ճանապարհներին վերստին ճեղք է տալիս նույն դրամատիկ տարակուսանքից.

Ե՞րբ պիտի տաս ինձ դադար
Թևերուդ մեջ հարազատ,
Ե՞ս եմ- վերջին քու տղադ
Դարձած օտար քեզ համար.... (55)
(«Իմ տուն, իմ մայր»)

Աշխարհի անծայր տարածությունում անտուն և անհայրենիք հոգեբանությամբ ապրող քնարական հերոսը տենչում է «երդիք մ' ունենալ»՝ «ապրող գրկի պես տաքուկ, լույսով, սիրով օրորուն», «երեխայի ճիչով լեցուն, ապուրի սեղանից ելնող ծխով», մոր բույրով օրհնված և «հոր փառքով անբասիր», «ամեն վայրկյան գրկաբաց վերադարձիդ սպասող» (56).

Քիչ մը գունատ որմերու ծանր ու խոհուն ժպիտով,
Մտերմախոս, հին ծանոթ իրերու հետ քովե քով,
Հանկարծ հուշեր հառաչող ծխնիներուն ունկնդիր,
Եվ մոր հոտով օրհնված և հոր փառքով անբասիր,
Քա՛ղցր է երդիք մ'ունենալ.... (57)
(«Քաղցր է երդիք մ' ունենալ»)

Անցյալի տան մտապատկերային ճանապարհին բանաստեղծը մանրակերտում է նաև վաղվա տան պատկերը, որն անհետացած հին տան վերստեղծանքը պիտի լինի, ուր պիտի ծաղկեն կորուսյալ գերդաստանի հիշատակները, հանգրվանեն անթաղ մեռելների անկայան հոգիները, նրա հարկի տակ պիտի բաբախի արևային նոր կյանք, և առավոտից երեկո այն պետք է լցվի երգ ու ծիծաղով, մանուկների խայտանքով: Հին ու նոր տան խորհրդապատկերները Մ. Իշխանի պոեզիայում միտված են հայրենական տան վերագտնման գաղափարին և տունդարձի ճանապարհին: Հույսը մշտապես կենսանորոգ է պահում այդ ճանապարհը, օտար քաղաքների աղմուկի մեջ չի խլանում ծննդավայրի կարոտականչը.

Պիտի կերտե՞մ ես կրկին քեզ քերթվածի մը նման,
Տված մեր հին քարերուն բոցե շաղախն արյունիս,
Պիտի ժայթքիս լուսագեղ դուն ինչպես նո՛ր, անմահ բան՝
Պանդուխտի պես օրերուս երկունքեն վերջ տանջալից....

Հողին վրա հայրերուս, որ արյան տաք մո՛ւխ է դեռ՝
Պիտի կերտեմ քեզ գինո՞վ, անհագորեն, քար առ քար,
Աչքերուս մեջ՝ շատերո՛ւ ջերմ կարոտներ վաղամեռ
Եվ թևերուս՝ ուժն ամբողջ հայ հանճարին շինարար.... (57)
(«Վաղվա տունը»)

«Տուներու երգը» ժողովածուն բանաստեղծի առաջին, բայց տառապանքից հաստուն գիրքն է, հայրենազուրկ, տարագիր հոգու մենախոսությունը՝ ցավի, հույսի, երազանքի և հուշի փոփոխականներով: Տունը Մ. Իշխանի բանարվեստում համանիշ է հայրենիքին, անտուն հոգու տառապանքն ու երազանքը՝ անհայրենիք հոգու տառապանքին ու բաղձանքին: Տան խորհրդապատկերը հաջորդող գրքերում փոխակերպվում է հայրենիքի պատկերի՝ ընդարձակելով ներքին տարածությունը, կորուսյալ վայրերի սրբադասումից հասնելով «Հայաստան» խորագրով ընդհանրացված պատկերի, ուր ամբարվում են պերճաշուք ու վսեմ հատկանիշները, որը և՛ ներբող-ձոներգ է, և՛ վավերամատյան, և՛ «վերադարձի երազագեղ ճանապարհ» (114).

Հայաստա՜ն,
Անգին նշխար ու մասունք՝
Կուրծքին վրա անհայրենիք հայության,
Խաչի մը պես պահապան
Եվ խաչյալի տառապակոծ պաշտամունք....(99)
Հայաստա՜ն,

Լեռներու պար, լեռնաշխարհ,
Երկիրդ ամբողջ՝ լեռ մը միայն-Արարա՛տ,
Վերապլաց և բրգանիստ գաղափար,
Հայրենադեմ աստվածության լույս ճակատ,
Որ կը կապե երկինքի ջինջ կապույտին
Հայության աչքն ու հոգին
Եվ երկինքեն լոկ կը նայի միշտ գետին,
Իր ոտքերուն տակ գալարվող բազմությանց
Խաժամուժին բարբարոս.... (106)

(«Հայաստան»)

Առաջին գրքի հոգևոր ճանապարհը շարունակվում է Մ. Իշխանի մյուս գրքերում: Սփյուռքահայության գոյության անորոշության, ինքնության կորուստների ճանապարհի խոհապատկեր է «Ո՞ւր կերթաս» բանաստեղծությունը.

Ամեն երթի ու կայքի
Տե՜ս, վրայեդ կը թափի
Հայու հոգիդ մաս առ մաս.... (236)

(«Ո՞ւր կերթաս»)

Ծննդավայրի կորուստի և լինելության հռետորական հարցադրումները Մ. Իշխանի բանաստեղծական աշխարհում չանէացող և ժամանակի հեռ առավել թանձրացող թախիծ ու կարոտ են առթում՝ առաջ բերելով հոգեբանական ճեղքում ու պոռթկում.

Լեռներ կային սեգ, լեռներ գեղատես,
Հեքիաթի կախարդ հսկաներ կարծես....
Լեռներն հոն են միշտ, գյուղին շուրջ կանգնած,
Հեքիաթն ո՞ւր մնաց.... (235)

(«Ո՞ւր մնաց»)

Ծննդավայրի լինել-չլինելու հարցադրումը Մ. Իշխանի պոեզիայում հոգևոր-առարկայական հարաբերակցության խոհափիլիսոփայական առեղծված է, որ «Կար ու չկար» բանաստեղծության մեջ այսպիսի դրսևորում է ստանում.

Կար ու չկար,
Բլուրի փեշին, ծառերուն տակ
Հայրենական հին գյուղ մը կար....

Այսպես, ծննդավայրը դառնում է հիշողության հեքիաթ, բայց նաև՝ կյանքի ոգեկան իմաստ, առանց որի իմաստազուրկ է դառնում ամեն ինչ. «Ես ի՞նչ տեսա աշխարհեն, երբ Մասիսը չտեսա»,- գրում է բանաստեղծը.

Զայն կը գրկե ամեն ժամ, և կը շնչե իմ հոգիս,
Բայց ո՜չ մեկ օր բաց աչքով ես Մասիսը չտեսա....
Կախարդական առասպել և հորիզոն աշխարհիս՝
Ես Մասիսը չտեսա.... (180)

(«Ես Մասիսը չտեսա»)

«Տուներու երգը» ժողովածուն հուշի, երազանքի ու տեսիլի պոեզիա է, կյանքի ու երազի դրամատիկ բախումի հանգուցալուծում, ազգային էությունը բացող բանաստեղծական գիրք:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մ.Իշխան, Տրովադայի ձին, «Մարմարա», 11.VII.1969, Պոլիս, էջ 2:
2. Նույն տեղում:
3. Մ. Իշխան, Երկեր, 1990, Երևան, էջ 22: Այսուհետ այդ գրքից հղումները կտրվեն տեքստում՝ փակագծերում նշելով էջը:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հայրենի տան ոգին Մ. Իշխանի պոեզիայում՝ որպես կյանքի բացարձակ գոյություն

Նարինե Հովհաննիսյան

Մ. Իշխանի պոեզիայում հայրենի տան ոգին բացարձակ գոյություն է՝ զգացական էությամբ, անպարագիծ տարողությամբ, անքննելի առարկայականությամբ: Պոեզիայի աշխարհում հռչակելով հայրենի տան ոգու իշխանությունը՝ բանաստեղծը նշանակետում դնում է տունդարձի ճանապարհի գաղափարը: Երկու հակադիր բևեռներ՝ կորուստն ու վերագտնումը, դառնում են Իշխանի հայրենական պոեզիայի հիմնադրույթները. կորուստը՝ որպես իրական սկզբնակետ, և վերագտնումը՝որպես գաղափարական վերջնակետ:

Հայրենի տան տեսլապատկերը, ինչպես հայոց լեզուն, Մ. Իշխանի պոեզիայում հոգևոր միջնաբերդ է, հայ ոգու ամրոց, ուր պիտի բնակվի և գոյության մարտահրավերներին դիմակայի տարագիր հայ հոգին:

«Տուներու երգը» ժողովածուն հուշի, երազանքի ու տեսիլի պոեզիա է, կյանքի ու երազի դրամատիկ բախումի հանգուցալուծում, ազգային էությունը բացող բանաստեղծական գիրք:

РЕЗЮМЕ

Дух родного дома и поэзии М.Ишхана как безусловное существование жизни

Нарине Оганесян

Ключевые слова: Родной дом, потеря, дух, память, ностальгия, уникальная ценность, видение, духовная цитадель, путь домой, повторное открытие.

В поэзии М. Ишхана дух родного дома абсолютен, с душевной сущностью, безграничной емкостью, непостижимой объективностью. В мире поэзии, провозглашая силу духа родного дома, поэт задает идею пути домой. Два противоположных полюса - утрата и новое открытие - становятся основой родной поэзии Ишхана. потеря как реальная отправная точка, повторное открытие как идеологическая конечная точка.

Изображения видения родного дома, как и армянский язык, являются духовной цитаделью в поэзии М. Ишхана, крепость армянского духа, где депортированная армянская душа должна столкнуться с вызовами существования.

Сборник «Песня домов» - это поэзия памяти, мечты и видения, решение драматического столкновения жизни и мечты, поэтическая книга, раскрывающая национальную сущность.

SUMMARY

The Spirit of the Home in the Poetry of M.Ishkhan as the Unconditional Existence of Life

Narine Hovhannisyan

Key words: Native house, loss, spirit, memory, nostalgia, unique value, vision, spiritual stronghold, the way home, rediscovery.

In the poetry of M. Ishkhan, the spirit of the home is absolute, with a spiritual essence, unlimited capacity, and incomprehensible objectivity. In the world of poetry, proclaiming the strength of the spirit of his home, the poet sets the idea of a way home. Two opposite poles - loss and new discovery - become the basis of Ishkhan's native poetry, loss as a real starting point, rediscovery as an ideological end point.

The images of the vision of the home, like the Armenian language, are a spiritual citadel in the poetry of M. Ishkhan, a fortress of the Armenian spirit, where the deported Armenian soul must face the challenges of existence.

The collection "Song of Houses" is the poetry of memory, dreams and visions, a solution to the dramatic collision of life and dreams, a poetic book that reveals the national essence.